ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«7» ապրիլ 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի տեղակալ _____ Հ. Այունց

ՍՑ-ԳԲԽ-14/17 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.01.2017թ. թիվ 03/73-1/245-17 և 28.02.2017թ. թիվ 03/73-3/3241-17 գրություններով ներկայացված «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 28.12.2016թ. թիվ ԴՎԱ/4151 գրության հիման վրա, 12.01.2017թ. թիվ 03/73-1/245-17 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ)

ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 07.02.2017թ. թիվ 01/04.1/363-17 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 12.01.2017թ. թիվ 03/73-1/245-17 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով արձանագրել է «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ Կենտրոնը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ընկերությանը ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ, քանի որ Օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտել է, որ խախտումը թույլ տալու պահից (20.10.2016թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 20.02.2017թ. թիվ ԴՎԱ/410 գրության հիման վրա, 28.02.2017թ. թիվ 03/73-3/3241-17 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

2.«ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 17.01.2017թ. թիվ 01/04.1/106-17 և 16.03.2017թ. թիվ 02/04.1/1014-17 գրություններով դիմել է «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ին, որին ի պատասխան՝ Ընկերության կողմից կարծիք չի ներկայացվել:

«ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 13.03.2017թ. ժամը 17:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-14/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը 28.12.2016թ. թիվ ԴՎԱ/4151 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) հիմք ընդունելով Պատվիրատուի և «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ի միջև 30.04.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/28-2» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր) 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները) 2016թ. հոկտեմբերի 20-ից միակողմանի լուծել է 30.04.2015թ. կնքված Պայմանագիրը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 20.02.2017թ. թիվ ԴՎԱ/410 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 1-ին չափաբաժնով մասնակցելու հայտ է ներկայացրել «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ն և գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ն armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Սահմանված ժամկետում «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ն պահանջվող որակավորման փաստաթղթերը չի ներկայացրել, ուստի գնահատող հանձնաժողովը «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով 13.03.2017թ. ժամը 17:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-14/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը և պնդել է 28.12.2016թ. թիվ ԴՎԱ/4151 և 20.02.2017թ. թիվ ԴՎԱ/410 գրություններով հայտնած դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ԳԲԽ-14/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 12.01.2017թ. թիվ 03/73-1/245-17 և 28.02.2017թ. թիվ 03/73-3/3241-17 գրություններով ներկայացված «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ի միջև 30.04.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/28-2» ծածկագրով գնման պայմանագրի վերաբերյալ

□ ՀՀ պաշտպանության նախարարության և «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ի միջև 30.04.2015թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-7/28-2» ծածկագրով գնման պայմանագիր:

□ Պայմանագրի N 2 հավելվածի համաձայն՝ «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ն պարտավորվել է մատակարարել մուրաբա տեղական /Մուրաբա մորու/ 54 650 կգ (2015թ.-ի օգոստոս ամսին՝ 13 600 կգ, սեպտեմբերին՝ 13 600 կգ, հոկտեմբերին՝ 13 600 կգ և նոյեմբերին՝ 13 850 կգ):

□«ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարին ուղղված 09.08.2016թ. գրությամբ խնդրել է, որպեսզի մորու մուրաբայի ամբողջ խմբաքանակը Ընկերության կողմից մատակարարվի 2016թ-ի սեպտեմբեր ամսին: Միևնույն ժամանակ Ընկերությունը հայտնել է իր պատրաստակամությունը Պայմանագրի պայմաններից բխող ուշացման տույժերի վճարման վերաբերյալ: Ընկերության խնդրանքին ի պատասխան՝ ՀՀ պաշտպանության նախարարի համաձայնությամբ, «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ին թույլատրվել

էր մատակարարումներն ավարտել մինչև 2016թ. սեպտեմբեր ամսվա ավարտը, սակայն Պայմանագրի շրջանակներում մատակարարումներն ընդհանրապես չեն իրականացվել:

 Պատվիրատուն Ընկերությանն ուղղված 20.10.2016թ. թիվ ԴՎԱ 3309 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ի միջև 30.04.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/28-2» ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ 2015 թվականի ընթացքում Ընկերության կողմից պետք է մատակարարվեր մորու մուրաբա, սակայն ***20.10.2016թ. դրությամբ մատակարարումներ ընդհանրապես չեն իրականացվել:*** Արդյունքում՝ Պայմանագրով սահմանված ժամկետները բազմիցս խախտվել են Ընկերության կողմից, մասնավորապես՝ մորու մուրաբա օգոստոս ամսին՝ 13 600 կգ - **399 օր**, սեպտեմբերին՝ 13 600 կգ- **369 օր**, հոկտեմբերին՝ 13 600 կգ – **388 օր**, նոյեմբերին՝ 13 850 կգ – **308 օր**:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 20.10.2016թ. Ընկերությանն ուղղված թիվ ԴՎԱ 3309 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները) 2016թ. հոկտեմբերի 20-ից միակողմանի լուծում է 30.04.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/28-2» գնման պայմանագիրը:

 Կենտրոնը 07.02.2017թ. թիվ 01/04.1/363-17 գրությամբ արձանագրել է, որ «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել ՀՀ պաշտպանության նախարարության և «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ի միջև 30.04.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/28-2» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագրով նախատեսված պարտավորության մեկից ավելի անգամ խախտում («Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտման առկայություն), միևնույն ժամանակ հաշվի առնելով Ընկերության կողմից խախտումը թույլ տալու օրվանից ***(20.10.2016թ..)*** մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ տեղեկատվության բացակայության հանգամանքը, գտել է, որ Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ

□ «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) ***28.11.2016թ.*** մասնակցության հայտ է ներկայացրել:

□ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2016թ. նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով արձանագրվել է, որ 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ն:

□ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.12.2016թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությունը Ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման փաստաթղթերը սահմանված ժամկետում չի ներկայացրել, ուստի գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

5. <u>ՍՑ-ԳԲԽ-14/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով ՀՀ պաշտպանության նախարարություն 28.12.2016թ. թիվ ԴՎԱ/4151 և 20.02.2017թ. թիվ ԴՎԱ/410 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ***ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների

գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ պաշտպանության նախարարության և ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ի միջև 30.04.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/28-2» ծածկագրով գնման պայմանագրի վերաբերյալ

□ Պայմանագրի 3.1.7 կետը սահմանում է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

□ Պայմանագրի 3.1.7.1 կետը սահմանում է, որ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները:

□ Այսպիսով, Ընկերությունը Պայմանագրի N 2 հավելվածի համաձայն, պարտավորվել է մատակարարել մուրաբա տեղական /Մուրաբա մորու/ 54 650 կգ (2015թ.-ի օգոստոս ամսին՝ 13 600 կգ, սեպտեմբերին՝ 13 600 կգ, հոկտեմբերին՝ 13 600 կգ և նոյեմբերին՝ 13 850 կգ)*:*

□ ***«ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարին ուղղված 09.08.2016թ. գրությամբ խնդրել է, որպեսզի մորու մուրաբայի ամբողջ խմբաքանակը Ընկերության կողմից մատակարարվի 2016թ-ի սեպտեմբեր ամսին:*** Միևնույն ժամանակ Ընկերությունը հայտնել է իր պատրաստակամությունը Պայմանագրի պայմաններից բխող ուշացման տույժերի վճարման վերաբերյալ: Ընկերության խնդրանքին ի պատասխան՝ ՀՀ պաշտպանության նախարարի համաձայնությամբ, «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ին թույլատրվել էր մատակարարումներն ավարտել մինչև 2016թ. սեպտեմբեր ամսվա ավարտը, սակայն Պայմանագրի շրջանակներում մատակարարումներն ընդհանրապես չեն իրականացվել:

□ Պատվիրատուն Ընկերությանն ուղղված 20.10.2016թ. թիվ ԴՎԱ 3309 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ի միջև 30.04.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/28-2» ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ 2015 թվականի ընթացքում Ընկերության կողմից պետք է մատակարարվեր մորու մուրաբա, սակայն ***20.10.2016թ. դրությամբ մատակարարումներ ընդհանրապես չեն իրականացվել:*** Արդյունքում՝ Պայմանագրով սահմանված ժամկետները բազմիցս

խախտվել են Ընկերության կողմից, մասնավորապես՝ մորու մուրաբա օգոստոս ամսին՝ 13 600 կգ - **399 օր**, սեպտեմբերին՝ 13 600 կգ- **369 օր**, հոկտեմբերին՝ 13 600 կգ – **388 օր**, նոյեմբերին՝ 13 850 կգ – **308 օր**:

Ուստի, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը (բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները), ՀՀ պաշտպանության նախարարությունը 2016թ. հոկտեմբերի 20-ից միակողմանի լուծում է 30.04.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/28-2» գնման պայմանագիրը:

Այսպիսով, Կենտրոնը գտնում է, որ «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ն թույլ է տվել ՀՀ պաշտպանության նախարարության և «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ի միջև 30.04.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/28-2» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագրով նախատեսված պարտավորության մեկից ավելի անգամ խախտում, քանի որ «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ի կողմից 2015թ.-ի օգոստոս ամսին չի մատակարարվել 13 600 կգ, սեպտեմբերին՝ 13 600 կգ, հոկտեմբերին՝ 13 600 կգ և նոյեմբերին՝ 13 850 կգ մուրաբա տեղական /Մուրաբա մորու/: «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարին ուղղված 09.08.2016թ. գրությամբ խնդրել է, որպեսզի մորու մուրաբայի ամբողջ խմբաքանակը Ընկերության կողմից մատակարարվի 2016թ-ի սեպտեմբեր ամսին, սակայն 20.10.2016թ. դրությամբ մատակարարումներ ընդհանրապես չեն իրականացվել և փաստացի չմատակարարելով վերոհիշյալ ապրանքը, Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետով նախատեսված էական խախտում, այն է՝ բազմիցս խախտել է Ապրանքի մատակարարման ժամկետները, որի արդյունքում Պատվիրատուն լուծել է Պայմանագիրը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ

ՀՀ պաշտպանության նախարարությունը 20.02.2017թ. թիվ ԴՎԱ/410 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ն ***28.11.2016թ.*** հայտ է ներկայացրել:

 Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2016թ. նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով արձանագրվել է, որ 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ն:

 Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.12.2016թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությունը Ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման փաստաթղթերը սահմանված ժամկետում չի ներկայացրել, ուստի գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

 Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ***հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը***, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ»ուղղ. պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: ***Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին***:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ Ընկերությունը վերոհիշյալ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտել է մեկ անգամ:

Անհրաժեշտ է նշել, որ, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն են՝

 նույն կետի «ա» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,

 խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

Ընկերությանը ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Ընկերությանը վերագրվող խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում Ընկերությունը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ,*** քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 20.02.2017թ. թիվ ԴՎԱ/410 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ն ***28.11.2016թ.*** հայտ է ներկայացրել:

Այսպիսով, Կենտրոնը արձանագրում է, որ «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ի վերաբերյալ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը ***20.10.2016թ.*** թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված պայմանագրային պարտավորության մեկից ավելի խախտում, որից հետո ***28.11.2016թ.*** կրկին հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/8» ծածկագրով ընթացակարգին:

Կարգի 125-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ***3 տարի ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը:***

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ պաշտպանության նախարարության 20.10.2016թ. թիվ ԴՎԱ/3309 գրության համաձայն՝ Ընկերության կողմից վճարվելիք «ՇՀԱՊՁԲ-7/28-2» ծածկագրով պայմանագրի կատարման ապահովման և Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետները խախտելու համար տուժանքի ընդհանուր գումարի չափը կազմել է ***18 868 138 ՀՀ դրամ, որը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը:***

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Կենտրոնը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 12.01.2017թ. թիվ 03/73-1/245-17 և 28.02.2017թ. թիվ 03/73-3/3241-17 գրություններով ներկայացված «ԷԴ ԸՆԴ ՋԱԿ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01548477) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երեք տարի ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Գնումների բողոքարկման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
Ահազանգման բաժնի պետ՝ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-14/17 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Գևորգյան